

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2016թ. նոյեմբերի 29-ին կայացած նիստի**

| | |
|-------------------|-----------------------------------------------------------------------------------------------|
| Նախագահությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի |
| Քարտուղարությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի |
| Մասնակցությամբ՝ | ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է) |

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. Ընթացիկ հարց: Հայցորդ ձևակերպելու մասին ստացված դիմումների քննարկում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

4. Ընթացիկ հարց: Թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

5. Ընթացիկ հարց: Աշոտ Չալինյանի և Վիլիկ Եդիգարյանի «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

6. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում աշխատակիցների համար անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպման հարցի քննարկում:

Ձեկուցող՝ լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ա.Այվազյան:

7. Ընթացիկ հարց: «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրով նախատեսված Ա.Լոքյանի, Գ.Նալբանդյանի, Գ.Հովհաննիսյանի, Ն.Ղազարյանի, Մ.Ազարյանի, Լ.Բոդյանի, Հ.Սամվելյանի «Գիտության կառավարման ոլորտում մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիքների բացահայտման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

8. Ընթացիկ հարց: «Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողի ուղեցույց»-ի հաստատում:

Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

9. Ընթացիկ հարց: Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկում:

Ձեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ա. Աղաջանյան

10. Ընթացիկ հարց: Ակադեմիայի խորհրդի նախկին նախագահ Վիգեն Սարգսյանին Ակադեմիայի ոսկե մեդալով պարգևատրելու հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

1.Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2016-2017 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա ուսուցման ընդունելության համար ՀՀ պետական կառավարման ակադեմիային հատկացվել են հետևյալ տեղերը՝

| Հ/Հ | Դասիչ | Մասնագիտություն | Հատկացված տեղեր | |
|----------|----------|---------------------------------------------------------------------------------------|-----------------|---------|
| | | | Անվճար | Վճարովի |
| 1. | ԺԲ.00.02 | Հանրային իրավունք | 2 | 1 |
| 2. | Ը.00.02 | Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում | 1 | 1 |
| 3. | ԻԳ.00.02 | Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ | 1 | |
| 4. | ԺԹ.00.01 | Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն | 1 | 1 |
| Ընդամենը | | | 5 | 3 |

Ընդունելության քննությունների մասնակցել են 8 հոգի: Ընդունելության արդյունքի հիման վրա անվճար հիմունքով ասպիրանտուրա են ընդունվել՝

1. ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ՝ Սիրարփի Արշակյանը և Ռուզաննա Աբրահամյանը:

2. Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ՝ Աննա Առաքելյանը:

3. ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ՝ Մանե Աթիկյանը:

4. ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ՝ Անուշ Ստեփանյանը:

Վճարովի հիմունքով ասպիրանտուրա են ընդունվել՝

1. ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ՝ Գայանե Բունիաթյանը:

2.Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ Աննա Պետրոսյանը:

3. ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ՝ Գոհար Չարխիֆալաքյանը:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ. Բեգիրջյանը, Ն. Ղազարյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանին մասնակցել են 11 հոգի, որից՝

- Ինֆորմատիկայի ստուգարքից – 6-ը՝ ստուգված, 2-ը՝ չներկայացած:
- Օտար լեզու (անգլերեն)- 5 գերազանց, 1-ը՝ լավ, 1-ը՝ չներկայացած:
- ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությունից- 3-ը՝ գերազանց, 2-ը՝ լավ:
- Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությունից- 1-ը՝ լավ, 1-ը՝ չներկայացած:

Արտահայտվեցին՝ Ա.Լոբյանը, Ա.Եզեկյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների աշնանային քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

3.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Հայցորդ ձևակերպելու մասին ստացված դիմումների քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ՝

1. Կառավարման հոգեբանության ամբիոնում 2016թ. նոյեմբերի 25-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտացմամբ հայցորդ ձևակերպելու համար դիմած Լիլիթ Նորիկի Բոդյանի, Սուսաննա Ալեքսանդրի Ավետիսյանի, Հասմիկ Հարությունի Հակոբյանի, Ռուբեն Աշոտի Հովհաննիսյանի, Զարուհի Մարտինի Տոնոյանի դիմումները: Հիմք ընդունելով նշված անձանց կողմից ներկայացված ռեֆերատների դրական կարծիքները, տպագրված գիտական հոդվածները, կառավարման հոգեբանության ամբիոնն առաջարկում է Լիլիթ Նորիկի Բոդյանին, Սուսաննա Ալեքսանդրի Ավետիսյանին, Հասմիկ Հարությունի Հակոբյանին, Ռուբեն Աշոտի Հովհաննիսյանին, Զարուհի Մարտինի Տոնոյանին ձևակերպել հոգեբանության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

2. Հանրային կառավարման ամբիոնում 2016թ. նոյեմբերի 24-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ հայցորդ ձևակերպելու համար դիմած Աննա Աշոտի Զալինյանի դիմումը: Հիմք ընդունելով ներկայացված ռեֆերատի դրական կարծիքը, հանրային կառավարման ամբիոնն առաջարկում է Աննա Աշոտի Զալինյանին ձևակերպել հանրային կառավարման ամբիոնում որպես հայցորդ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Լոբյանը, Ռ.Ադուզումցյանը:

Որոշեցին՝

1. Լիլիթ Նորիկի Բոդյանին, Սուսաննա Ալեքսանդրի Ավետիսյանին, Հասմիկ Հարությունի Հակոբյանին, Ռուբեն Աշոտի Հովհաննիսյանին, Զարուհի Մարտինի Տոնոյանին ձևակերպել հոգեբանության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

2. Աննա Աշոտի Զալինյանին ձևակերպել հանրային կառավարման ամբիոնում որպես հայցորդ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»

մասնագիտությամբ:

4. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ՝ իրավագիտության ամբիոնը 2016թ. նոյեմբերի 18-ին կայացած ամբիոնի նիստում քննարկել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի խնդրանքը և միջնորդում է ՀՀ ՊԿԱ գիտական խորհրդին՝

1/ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ ասպիրանտ Ռաֆայել Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն. սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ն.Խաչատրյանին:

2/ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Քրիստինե Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ֆ.Պ.Թոխյանին:

3/ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Իզաբելլա Իսկանդարյանի «Բժշկական ապահովագրության ֆինանսաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ն.Խաչատրյանին:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝

1. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ ասպիրանտ Ռաֆայել Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն. սահմանադրաիրավական հետազոտություն» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ն.Խաչատրյանին:

2. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Քրիստինե Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ Ֆ.Պ.Թոխյանին:

3. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Իզաբելլա Իսկանդարյանի «Բժշկական ապահովագրության ֆինանսաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատել «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» վերտառությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ա.Հ.Խաչատրյանին:

5. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Աշոտ Զալինյանի և Վիլիկ Եղիզարյանի «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան: Զեկուցողը նշեց, որ հանրային կառավարման ամբիոնում 2016թ. նոյեմբերի 22-ին ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի դոցենտ Աշոտ Զալինյանի և դասախոս Վիլիկ Եղիզարյանի «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» ուսումնամեթոդական ձեռնարկը իրենց ֆինանսական միջոցներով տպագրության երաշխավորելու հարցը և նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են Ակադեմիայի գիտական խորհրդին Աշոտ Զալինյանի և Վիլիկ Եղիզարյանի «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ Աշոտ Զալինյանի և Վիլիկ Եղիզարյանի «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

6. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում աշխատակիցների համար անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպման հարցի քննարկում:

Զեկուցող՝ լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ա.Այվազյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Ա.Գևորգյանը:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի աշխատակիցների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ, դասախոսների վճարումը կատարել Ակադեմիայի արտաբյուջետային միջոցներից ժամավճարային հիմունքներով:

7. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրով նախատեսված Ա.Լոքյանի, Գ.Նալբանդյանի, Գ.Հովհաննիսյանի, Ն.Ղազարյանի, Մ.Ազարյանի, Լ.Բոդյանի, Հ.Սամվելյանի «Գիտության կառավարման ոլորտում մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիքների բացահայտման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրով նախատեսված Ա.Լոքյանի, Գ.Նալբանդյանի, Գ.Հովհաննիսյանի, Ն.Ղազարյանի, Մ.Ազարյանի, Լ.Բոդյանի, Հ.Սամվելյանի «Գիտության կառավարման ոլորտում մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման կարիքների բացահայտման մեթոդաբանություն» մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

8. Լսեցին՝ Ընթացիկ հարց: «Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողի ուղեցույց»-ի հաստատման հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Լ.Զիլֆուղարյանը:

Որոշեցին՝ Հաստատել «Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողի ուղեցույց»-ը (կից ներկայացվում է):

9. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերի քննարկումը:

Զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Արսեն Աղաջանյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Լ.Զիլֆուղարյանը, Ա.Աղաջանյանը:

Որոշեցին՝ Հաստատել ուսանողական խորհրդի կողմից ներկայացված տարեկան և բյուջետային ծրագրերը (կից ներկայացվում է):

10. Լսեցին՝ Ընթացիկ հարց: Ակադեմիայի խորհրդի նախկին նախագահ Վիգեն Սարգսյանին Ակադեմիայի ոսկե մեդալով պարգևատրելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան:

Զեկուցողն առաջարկեց ՀՀ պետական կառավարման ակադեմիայի զարգացման գործում ցուցաբերած աջակցության և օժանդակության համար Ակադեմիայի խորհրդի նախկին նախագահ Վիգեն Սարգսյանին պարգևատրել Ակադեմիայի ոսկե մեդալով:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի զարգացման գործում ցուցաբերած աջակցության և օժանդակության համար Ակադեմիայի խորհրդի նախկին նախագահ Վիգեն Սարգսյանին պարգևատրել Ակադեմիայի ոսկե մեդալով:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

29 նոյեմբերի 2016թ.

Կ.Տ.